ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄՄՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ 2022-23 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

08.07.2023թ.

ԵՊՀ Իջևանի Մասնաճյուղն իր ուսանողակենտրոն գործունեությամբ ու թափանցիկ կառավարմամբ հնարավորություն է տալիս իր շահակիցներին մշտապես իրազեկված և տեղակացված լինել բոլոր գործընթացներից, դառանալ դրանց իրականացման մասնակիցներ և իրենց առաջարկներով աջակցել դրանց բարելավմանն ու զարգացմանը: Մասնաճյուղը պարբերաբար անդրադառնում է իր շահակիցների բարձրաձայնած խնդիրներին ու առաջարկներին՝ դրանց լուծման և իրականացման համար պլանավորելով իր հետագա գործունեությունը:

Նշեք, որ մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում տարբեր մեխանիզմներով ուսումնասիրում է մասնաճյուղի շահակիցների կարիքները և խնդիրները, հավաքագրում է նրանց առաջարկները, վերլուծում և տրամադրում համապատասխան ստորաբաժանումներին՝ համապատասխան լուծումներ առաջարկելու համար:

Բաժինը 2023թ.-ի մայիսին առցանց անանուն հարցման միջոցով իրականացրել է ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից 2022-23 ուստարվա շրջանավարտների բավարարվածության ուսումնասիրություն: Հարցման նպատակն էր պարզել շրջանավարտների բավարարվածությունը մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպումից և իրականացումից, պրակտիկաների կազմակերպումից, մատուցվող ծառայություններից և ռեսուրսներից, համալսարանական միջավայրից, գնահատման գործող համակարգից, գնահատման օբյեկտիվությունից և այլն:

Հարցումն իրականացվել է ամփոփիչ ատեստավորման քննությունից հետո՝ դրանով ապահովելով հարցման օբյեկտիվությունը և առավելագույն անկեղծությունը: Նշեք, որ խնդիրները հասցեային ունենալու համար շրջանավարտներից պահանջվել է նշել միայն կրթական ծրագիրը:

2022-23 ուստարում մասնաճյուղն առկա ուսուցման 12 կրթական ծրագրերով տվել է 129 շրջանավարտ, որոնցից հարցմանը մասնակցել է **124-ը,** այսինքն շրջանավարտների **96%-ը,** որը առցանց հարցումների տեսանկյունից մասնակցության բավականին բարձր ցուցանիշ է:

Հարցմանը շրջանավարտների մասնակցության ցուցանիշներն ըստ կրթական ծրագրերի հետևյալն է.

Կրթական ծրագիր	շրջանավարտ	մասն.	%
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	19	17	**89%**
Ֆինանսներ(ըստ ոլորտի)	17	17	**100%**
Զբոսաշրջություն	15	14	**93%**
Հայոց լեզու և գրականություն	8	8	**100%**
Հոգեբանություն	6	6	**100%**
Պատմություն	7	7	**100%**
Անգլերեն լեզու և գրականություն	21	19	**90%**
Ֆրանսերեն լեզու և գրականություն	6	6	**100%**
Ռուսերեն լեզու և գրականություն	3	3	**100%**
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	10	10	**100%**
Դեկորատիվ կիրառական արվեստ	8	8	**100%**
Դիզայն	9	9	**100%**
Ընդամենը՝	**129**	**124**	**96%**

Մասնակցության այս ցուցանիշները վկայում են, որ հարցման արդյունքները կարելի է համարել արժանահավատ, նպատակային, հետևաբար ձեռքբերումները՝ նշանակալի ու պարտավորեցնող, խնդիրները՝ առարկայական և ուշադրության արժանի:

Ուսումնասիրության մեջ ներառված հարցերը նպատակ ունեին պարզելու շրջանավարտների գնահատականը ստացած կրթության, դրա անհրաժեշտության և օգտակարության վերաբերյալ:

Հարցման արդյունքները մշակվել և ընդհանրացվել են ըստ ֆակուլտետների, ըստ կրթական ծրագրերի և ներկայացված են միջին գնահատականներով կամ տոկոսներով:

Նախ նշենք, որ հարցմանը մասնակցած **39 շրջանավարտների** (31%) միջին որակական գնահատականը (ՄՈԳ-ը) 18-20 է, իսկ **68-ինը** (55%)՝ 13-17: Այսինքն 2022-23 ուստարում Մասնաճյուղի ընդամենը 17 շրջանավարտ է ունեցել բավարար առաջադիմություն:

Նաև ուրախությամբ պետք է նշել, որ հարցման մասնակիցների **49%-ը** պատրաստվում է շարունակել ուսումը, որում մեծ թիվ են կազմում հումանիտար գիտությունների ֆակուլտետի հետևյալ կրթական ծրագրերի շրջանավարտները. «Հայոց լեզու և գրականություն» (բոլորը՝ 8), «Պատմություն»՝ **86%-ը,** «Հոգեբանություն»՝ **80%-ը**, նաև «Ֆինանսներ» կրթական ծրագրի շրջանավարտների **59%**-ը:

Աշխատաշուկայում ունեցած հաջողության տեսանկունից վերջին տարիներին աչքի է ընկնում բնական գիտությունների ֆակուլտետը՝ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա»

կրթական ծրագրով: Շրջանավարտների **76%-ը (17-ից 13-ը)** արդեն աշխատում է, որոնցից **77%-ը (10-ը)** աշխատում է իր մասնագիտությամբ: Այս բարձր ցուցանիշը պայմանավորված է մարզում և հատկապես Իջևան քաղաքում վերջին տարիներին SS ոլորտի զարգացմամբ և աշխատատեղերի ավելացմամբ: Նաև մեծ խթան է մասնաճյուղի ակտիվ համագործակցությունը մարզում SS ոլորտի ներկայացուցիչների հետ:

Կիրառական արվեստի ֆակուլտետի 2 կրթական ծրագրերի 17 շրջանավարտներից **9-ը** աշխատում են, որոնցից **6-ը՝** իր մասնագիտությամբ:

Ըստ արդյունքների հարցմանը մասնակցած 124 շրջանավարտներից **50-ն աշխատում է,** որոնցից 25-ն իր մասնագիտությամբ, նշենք նաև, որ 16-ը գիտի, թե որտեղ է աշխատելու, սակայն 58-ի համար դեռևս պարզ չէ իր աշխատանքային, առավել ևս մասնագիտական գործունեության ապագան:

Ոչ մասնագիտությամբ աշխատող ուսանողների թիվը բարձր է «Պատմություն»՝ 57%, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»՝ 30%, «Անգլերեն լեզու և գրականություն»՝ 26% կրթական ծրագրերում:

Այս առումով ցանկալի կլիներ, որ բոլոր կրթական ծրագրերի շրջանավարտները կարողանային աշխատել և աշխատել մասնագիտությամբ, ինչին ձգտում է Մասնաճյուղը՝ կրթական ծրագրերն ուղղորդելով աշխատաշուկայի պահանջներին, հաշվի առնելով մարզի զարգացման միտումները:



I. Բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից, ուսումնական գործընթացի կազմակերպումից և գործող գնահատման համակարգից

Ուրախությամբ պետք է նշել, որ շրջանավարտները, ընդհանուր առմամբ, բավարարված են իրենց ստացած կրթությունից, կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսումնական

գործընթացի կազմակերպումից և այլն: Նրանց տված միջին գնահատականը գրեթե բոլոր գործընթացների համար բարձր է 4-ից, որոշ գործընթացների համար այն գերազանցում է **4.5**-ին:

Շրջանավարտներն իրենց գնահատականներով փաստել են, որ ուսումնառությունը մասնաճյուղում նպաստել է մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերմանը, (միջին գնահատականը համապատասխանաբար **4.5 և 4.4**), ձևավորել է գործնական հմտություններ (միջին գնահատականը՝ **4.2**):

Իրենց ստացած **տեսական գիտելիքներից** բարձր բավարարվածություն են արտահայտել բոլոր ֆակուլտետների շրջանավարտները. բնական գիտությունների ֆակուլտետ՝ միջ.գն. **4.5**, հումանիտար գիտությունների ֆակուլտետ՝ **4.7**, կիրառական արվեստի ֆակուլտետ՝ **4.3**, տնտեսագիտության ֆակուլտետ՝ **4.4**:



Հարցմանը մասնակցած շրջանավարտների **62%-ը** գտնում է, որ Մասնաճյուղում ուսումնառությունը **լիովին** նպաստել է <u>մասնագիտական կարողությունների ձեռքբերմանը</u>, սակայն գտնում են, որ իրենց մոտ ձևավորված <u>գործնական հմտությունները</u> զիջում են մասնագիտական կարողություններին:



Այստեղ պետք է ուրախությամբ նշել, որ Մասնաճյուղի ջանքերն ուղղված ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը, որոնք եղել են կրթական ծրագրերի վերանայման և մշտադիտարկման, պրակտիկաների ծրագրերի վերանայման ու բարելավման գործընթացների հիմքում տվել են իրենց արդյունքները և նախորդ 3 տարիների համեմատ դրանք էապես բարելավվել են:



Արտահայտված խնդիր ունենք օտար լեզվի իմացության մակարդակի հետ կապված: Հարցման արդյունքներից կարելի է եզրակացնել, որ բոլոր կրթական ծրագրերի շրջանավարտները (բացի անգլերեն լեզու և գրականություն, ֆրանսերեն լեզու և գրականություն կրթական ծրագրերի շրջանավարտների) բավարարված չեն Մասնաճյուղում օտար լեզվի իմացության ապահովման ձևերից ու պահանջներից, ինչը և արտահայտվել է նրաց գնահատականներում (**միջ. գն. 3.8**) և



ինչպես ցույց են տալիս դիագրամում ներկայացված տվյալները բոլոր կրթական ծրագրերի (ընդգծված «Դեկորատիվ և կիրառական արվեստ», «Դիզայն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրերի) շրջանավարտների կեսից ավելին մասնակի են բավարարված օտար լեզվի իմացության ապահովումից, իսկ «Պատմություն» կրթական ծրագրի շրջանավարտների 57%-ը (7-ից 4-ը) գտնում են, որ չի ապահովվում օտար լեզվի իմացություն:

Այստեղ հրավիրում ենք **<u>օտար լեզուների ամբիոնի ուշադրությունը</u>**, որովհետև այս խնդիրը եղել է նաև նախորդ տարիների շրջանավարտների համար և պահանջում է, հավանաբար, լեզվի մատուցման և ուսանողների կողմից նրա յուրացման և կիրառության հետևողական և նոր մոտեցումներ ու չափանիշներ: Տեղեկատվական այս դարում լեզվի իմացությունը կարևոր միջոց է անհատի զարգացման, նրա կարիերայի և առաջընթացի ապահովման համար:

Անդրադառնանք մի քանի **<u>գործընթացների օգտակարության</u>** վերաբերյալ շրջանավարտների կարծիքներին և դրանց վերլուծությանը: Նշենք, որ հարցմանը մասնակցած 124 շրջանավարտների **63%-ը** փաստում է, որ մատուցված դասընթացները օգտակար են, **65%-ը** օգտակար է համարել նաև անցկացված պրակտիկաները:



Գնահատման գործող համակարգի օբյեկտիվության և թափանցիկության վերաբերյալ շրջանավարտների կարծիքները միջին են, նրանց գրեթե կեսը՝ համապատասխանաբար **53%-ը** և **49%-ը,** դրանք գնահատում են **«լավ»,** մյուս մասը **(38%, 47%)**՝ միջին օգտակարության: Այս արդյունքները միջին գնահատականներով ըստ կրթական ծրագրերի հետևյալն են.

Ինչպե՞ս եք գնահատում.	ԻԿՄ	ԴԿԱ	Դիզ.	ՀԼԳ	ԱԼԳ	ՖԼԳ	ՌԼԳ	Պատմ.	Հոգ.	ՏՄՄ	Զրոս.	Ֆին.
Դասընթացների օգտակարությունը	4.0	4.8	4.7	5.0	4.6	4.3	4.0	4.4	4.5	4.9	4.1	4.3
Պրակտիկաների օգտակարությունը	4.3	4.4	4.3	5.0	3.8	4.1	4.1	4.1	4.8	4.7	4.7	4.6
Գնահատման համակարգի օբյեկտիվությունը	4.1	4.1	4.2	4.6	4.2	4.4	5.0	4.4	4.8	4.1	3.9	3.7
Գնահատման համակարգի թափանցիկությունը	4.0	3.7	4.2	4.8	4.4	4.4	4.5	4.4	4.8	4.0	4.1	3.8

Այս արդյունքներից կարելի է կատարել հետևյալ եզրակացությունը, որ կրթական ծրագրերը հաջողված են, որ նրանց բովանդակությունը համահունչ է աշխատաշուկայի պահանջներին և ներառված դասընթացները և իրականացված պրակտիկաները օգնել են մեր շրջանավարտներին ուսումնառության ընթացքում դրսևորել իրենց ձեռքբերումները մասնագիտական միջավայրում, զգալու իրենց ձեռքբերումների օգտակարությունը և հաստատելու իրենց վստահությունը մասնաճյուղի և նրա իրականցրած կրթության նկատմամբ:

Պրակտիկաների հետ կապված խնդիրներ են նկատվում մի քանի կրթական ծրագրերում. «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Պատմություն»: Այստեղ, հավանաբար, խնդիրը պրակտիկայի անցկացման վայրերի ընտրության հետ է կապված, ինչի մասին բարձրաձայնվել է նաև այլ ուսումնասիրությունների ժամանակ, և պայմանավորված է մարզում օտար լեզուների կիրառման սահմանափակ հնարավորություններով: Այս ուղղություններում պրակտիկաների արդյունավետությունը և ուսանողների բավարարվածության մակարդակը բարձրացնելու համար ֆակուլտետները և ամբիոնները պետք է ընդլայնեն տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակները, ստեղծեն հնարավորություններ մասնագիտական պրակտիկաները նպատակային անցկացնելու համար:

Մնացած կրթական ծրագրերով վերջին տարիներին պրակտիկաների իրականացման արդյունավետությունը բարձրացել է մարզում ոլորտային կազմակերպությունների և նոր աշխատատեղերի թվի ավելացմամբ պայմանավորված:

Վերևում ներկայացված արդյունքները խոսում են նաև **գնահատման գործընթացի** օբյեկտիվության և թափանցիկության հետ կապված խնդիրների մասին: Այստեղ ընդգծված անբավարարվածություն են արտահայտել տնտեսագիտության ֆակուլտետի 2 կրթական ծրագրերի շրջանավարտները, հետևաբար համապատասխան ամբիոնների միջոցով պետք է պարզել այդ խնդիրների առաջացման պատճառները և գտնել հնարավոր բացասական դրսևորումների բացառման ուղիներ:

Գնահատման այդ ֆոնի վրա ավարտական աշխատանքների պաշտպանության օբյեկտիվությունից բավարարվածության գնահատականների միջինը բոլոր կրթական ծրագրերում 4-ից բարձր է, հարցմանը մասնակցած շրջանավարտների **62%-ը** այն գնահատել է 5 գնահատականով: Նշենք, որ տնտեսագիտության ֆակուլտետում այդ գնահատականն ամենացածրն է և կազմել է **4.1**, ընդ որում «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի

շրջանավարտները այն գնահատել են **4.0,** իսկ «Զբոսաշրջություն» կրթական ծրագրինը՝ **4.3** միջին գնահատականով:



Հավելենք, որ ավարտական աշխատանքների պաշտպանությունից «Ֆինանսաներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի 17 շրջանավարտներից 7-ը ստացել է գերազանց, 8-ը՝ լավ, և միայն 2-ը՝ բավարար գնահատական:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետում ավարտական աշխատանքների պաշտպանության օբյեկտիվությունից շրջանավարտները բավարարված են և այն գրեթե բոլոր կրթական ծրագրերի համար ընկած է **4.5-5.0 միջակայքում**: «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 8 շրջանավարտներից 7-ը, «Ռուսաց լեզու և գրականություն» ծրագրի 3-ից 2-ը, «Հոգեբանություն» և «Դեկորատիվ կիրառական արվեստ» կրթական ծրագրերի բոլոր շրջանավարտները ստացել են գերազանց գնահատականներ: Հումանիտար գիտությունների ֆակուլտետում այդ գործընթացը համեմատաբար ցածր միջին գնահատականով են գնահատել «Պատմություն» և «Հոգեբանություն» կրթական ծրագրերի շրջանավարտները՝ համապատասխանաբար **4.1 և 4.2,** որի արդյունքում էլ ֆակուլտետի միջին գնահատականը կազմել է 4.5:

Բավականին բարձր են ավարտական աշխատանքների գիտական ղեկավարներից բավարարվածության գնահատականները, դրանք բոլոր ֆակուլտետների համար գերազանցում են **4.5** միջին գնահատականին:

II.Բավարարվածությունը ուսումնական ռեսուրսներից

Անդրադառնալով Մասնաճյուղի ռեսուրսներից շրջանավարտների բավարարվածությանը, կարող ենք նշել, որ այն առանձնապես բարձր չէ և միջին գնահատականը Մասնաճյուղի համար կազմել է մոտավորապես 4.0 և 4.1 միավոր:

Հարցմանը մասնակցած շրաջանավարտների կեսից ավելին՝ **51%-ը** իր բավարարվածությունը լսարանների վիճակից և կահավորանքից գնահատել է «միջին»: Այդ գնահատականը հատկապես ցածր է բնական գիտությունների և կիրառական արվեստի ֆակուլտետներում և

համապատասխանաբար հավասար է **3.5 և 3.7** միջին միավորի, ինչը հասկանալի է և ունի բացատրություն։

Համակարգչային սրահների մատչելիությունից և կահավորանքից բավարարվածությունը բոլոր ֆակուլտետների համար գնահատվել է **4.0-ից 4.2** միջին գնահատականներով, որը վատ արդյունք չէ, սակայն գոհացնող էլ չէ, եթե հաշվի առնենք, որ իրականում մասնաճյուղի համակարգչային սրահները հարմարավետ են, կահավորված են և հագեցած են ժամանակակից լավ համակարգիչներով և այլ անհրաժեշտ տեխնիկայով, ուսանողներին հասանելի են ամբողջ օրվա ընթացքում, օգտագործվում են և՛ ուսումնական գործընթացում, և՛ դրանից դուրս։ Իրականում անհասկանալի է, թե ինչու՞ է շրջանավարտների միայն 45%-ը լիարժեք բավարարված համակարգչային սրահներից։ Նույն իրավիճակն է՝ կապված համացանցի մատչելիության հետ, այն դեպքում, երբ համակարգչային սրահներում գործում է անվճար և բավականին արագ ինտերնետ կապ։



Ճիշտ է, այդ գնահատականները վերջին 3 տարիների համեմատ բարձրացել են **0.2-0.3** միավորով, այնուամենայնիվ ռեսուրսների հետ կապված պետք է ուսումնասիրել և պարզել այն խնդիրները, որոնք ուսանողների մոտ ձևավորում են համակարգչային սրահների և համացանցի մատչելիությունից բավարարվածության միջին մակարդակ։

Իսկ ահա գրադարանի ընթերցասրահի սպասարկումից և էլ.գրադարանից բավարարվածության միջին գնահատականները բարձր են բոլոր ֆակուլտետներում և մասնաճյուղի համար համապատասխանաբար հավասար են **4.6 և 4.4** միջին միավորի, այսինքն հարցմանը մասնակցած շրջանավարտների համապատասխանաբար **76%-ը և 60%-ն** իր բավարարվածությունը գնահատել է «լավ»։ Այս արդյունքներին մի փոքր զիջում է գրադարանում

առկա մասնագիտական գրականությունից բավարարվածության գնահատականը՝ **4.1** միջին միավոր, կամ բավարարվածության «լավ» մակարդակի **60%** արդյունք: Մասնագիտական գրականության հետ կապված խնդիր են արձանագրել «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի շրջանավարտները՝ միջին գնահատականը **3.94**, «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի շրջանավարտները՝ միջին գնահատականը **3.5,** «Դեկորատիվ կիրառական արվեստ» կրթական ծրագրի շրջանավարտները՝ միջին գնահատականը՝ **3.88** և «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի շրջանավարտները՝ միջին գնահատականը **3.0**: Վերջին կրթական ծրագիրը տվել է իր առաջին շրջանավարտները և ակնհայտ է ծրագրի կայացման և առաջընթացի համար դեռևս բավականին աշխատանքներ պետք է տարվեն:



Նշենք, որ Մասնաճյուղը պարբերաբար ձեռք է բերում մասնագիտական անհրաժեշտ գրականություն, սակայն խնդիրը միշտ կա և կլինի, որովհետև դեպի գիտությունն ուղղորդված կրթությունը, ուսանողների կողմից հետազոտական աշխատանքների իրականացումն առաջ է բերում նոր ժամանակակից գրականության մեծ պահանջարկ:

III. Բավարարվածությունը համալսարանական միջավայրից

Այժմ դիտարկենք Մասնաճյուղի ղեկավարությունից, ֆակուլտետի ղեկավարությունից և պրոֆեսորադասախոսական կազմից շրջանավարտների բավարարվածության արդյունքները: Հարցմանը մասնակցած 124 շրջանավարտներից **91-ը (73%-ը)** մասնաճյուղի ղեկավարությունից բավարարվածությունը գնահատել է «լավ», միջին գնահատականը՝ **4.6**: Ֆակուլտետների ղեկավարությունից և պրոֆեսորադասախոսական կազմից բավարարվածությունը նույնպես բարձր է և հավասար է **4.7** միջին միավորի: Նշեք, որ այս ցուցանիշներն անցած ուստարվա համեմատ աճել են համապատասխանաբար **0.6, 0.4 և 0.5** միավորով:



Ուսանողական կառույցներից և ուսանողների դիմումներին և բողոքներին արձագանքելու ընթացակարգերից բավարարվածությունը նույնպես միջինում բարձր է, սակայն համեմատական կարգով ունի առավել ուշադրության և հետևողականության պահանջ:

IV. Ընդհանուր գնահատականը ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից

Հպարտությամբ պետք է փաստել, որ մեր շրջանավարտները միշտ բարձր բավարարվածություն են արտահայտել մասնաճյուղում ստացած իրենց կրթության վերաբերյալ, այդ մասին նշելով թե՛ գնահատականներով և թե՛ գոհունակության խոսքերով:

Այս տարվա շրջանավարտները նույնպես մասնաճյուղում ստացած իրենց կրթությունը գնահատել են բարձր գնահատականներով. բոլոր ֆակուլտետների համար այս ցուցանիշի միջին գնահատականը հավասար է **4.5-ի,** մասնաճյուղի համար այն կազմել է **4.4**, որում իր ազդեցությունն է ունեցել բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի շրջանավարտների տված միջին գնահատականը՝ **3.9**, որը բավականին ցածր գնահատական է, ցածր է եղել նաև անցած տարի, ինչը նշանակում է, որ այդ կրթական ծրագրում խնդիրներ կան, ինչը երևի պետք է կապել այն փաստի հետ, որ ծրագրի շրջանավարտների կեսից ավելին ուսումնառությանը զուգահեռ աշխատում են իրենց մասնագիտությամբ և նախապես են առնչվել ստացած կրթության և նրա կիրառության միջև առկա տարբերությունների հետ: Չնայած



նրանց տված այդ գնահատականին, այնուամենայնիվ նրանց **82%-ը** վստահում է մասնաճյուղին, նրա տված բարձրորակ կրթությանը և խորհուրդ կտա իր մերձավորներին և բարեկամներին սովորել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում: Նշենք, որ այդ կրթական ծրագիրը պարբերաբար վերանայվում է և ուղղորդվում տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին:

Հարցմանը մասնակցած շրջանավարտների **90%-ը** նշել է, որ **<u>խորհուրդ կտա իր մերձավորներին կրթություն ստանալ ԵՊՀ ԻՄ-ում:</u>** Իսկ ըստ կրթական ծրագրերի շրջանավարտների կարծիքները հետևյալն են.









Այս արդյունքները փաստում են, որ մասնաճյուղն ունի իր դերն ու կարևոր տեղը մարզի երիտասարդության և հասարակության շրջանում, նրանք վստահում են Մայր բուհի միակ մասնաճյուղին, գալիս են սովորելու և ստանալու բարձրորակ կրթություն, ապահովելու իրենց ապագա կարիերան, կրթության շարունակականությունը և այլն:

Շրջանավարտներն իրենց գոհունակությունն են հայտնել մասնաճյուղի, նրա ղեկավարության, պրոֆեսորադասախոսական կազմի վերաբերյալ և որպես մասնաճյուղի ուժեղ կողմեր նշել են.

- որակյալ կրթությունը,
- պրոֆեսորադասախոսական բարձրակարգ կազմը,

- հասանելի և մատչելի կրթությունը (ցածր վարձավճար, զեղչերի հնարավորություն, աշխարհագրական հարմար դիրք),
- անհատական մոտեցումը և ջերմ մթնոլորտը,
- կազմակերպված ղեկավարումը, օբյեկտիվությունն ու արդարությունը,
- հարուստ գրադարանը և էլ.գրադարանի առկայությունը,
- արդյունավետ պրակտիկաները և հաջողված համագործակցությունները տարբեր կազմակերպությունների հետ (օրինակ, ՀՀ ԿԲ-ի հետ)։

Ակնհայտ է, որ մասնաճյուղի նպատակը միայն լավ կողմերը նշելը չէ, այլ նաև խնդիրները բացահայտելը և դրանց համար լուծումներ գտնելը։ Այդ նպատակով հարցման մասնակիցներին խնդրել էինք նշել մասնաճյուղի նաև թույլ կողմերի մասին։ Նրանց կողմից նշված են հիմնականում մասնաճյուղի շենքային պայմաններին վերաբերող խնդիրներ, դրանցից են. խոնավության առկայություն, լուսավորության պակաս, շենքային ոչ բավարար պայմաններ, լսարանային ֆոնդի անբավարարություն, լսարանների ոչ լավ կահավորվածություն։ Ուսումնական գործընթացի հետ կապված խնդիրներից նշել են. օտար լեզուների իմացության ապահովման ցածր մակարդակ, անսարք համակարգիչների առկայություն, WiFi կապի բացակայություն, ցածր կրթաթոշակներ, նեղ մասնագիտական գրականության պակաս, տեղացի դասախոսների քիչ քանակ, ուսանողների շատ բացակայություններ, անվճար մագիստրատուրայի սահմանափակ հնարավորություն, աշխատանք ունենալու սահմանափակ հնարավորություն և այլն)։

Շրջանավարտները շնորհակալություն են հայտնել մասնաճյուղի ղեկավարությանը և առանձնահատուկ իրենց դասավանդող դասախոսներին, նաև դեկաններին և ուսումնաօժանդակ անձնակազմին որակյալ և մրցունակ կրթություն տալու, ջերմ ու ուսանողակենտրոն միջավայր ապահովելու համար։

Նրանք կատարել են ուսումնական գործընթացի բարելավմանն ուղղված մի քանի առաջարկներ։

Կիրառական արվեստի ֆակուլտետի շրջանավարտներն առաջարկում են պրակտիկայի շրջանակներում հաճախել դիզայներական տներ, մասնակցել ցուցադրությունների, հանդիպումներ կազմակերպել կայացած դիզայներների հետ, համալրել գրադարանը իրենց ոլորտի նոր մասնագիտական գրականությամբ։

Բնական գիտությունների ֆակուլտետի շրջանավարտների հիմնական խնդիրը կապված է շենքային պայմանների հետ, մասնավորապես մասնաշենքի տանիքի հիմնովին վերանորոգման հետ։

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի շրջանավարտներն առաջարկում են ուսումնական գործընթացում ավելի շատ կիրառել դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդներ, գնահատել ուսանողների քննադատական և տրամաբանական մտածողությունը, ոչ թե միայն գրքային իմացությունը, հաճախակի կազմակերպել գիտաժողովներ՝ նաև ուսանողների մասնակցությամբ, հնարավորություն ստեղծել ԵՊՀ-ի անվճար մագիստրատուրայում սովորելու համար (ավելացնել տեղերի քանակը), ավելացնել պրակտիկաների քանակը և ընդլայնել պրակտիկաների վայրերի ցանկը (օրինակ, «Հոգեբանություն» կրթական ծրագրի ուսանողների պրակտիկաներն իրականացվեն ոչ միայն «Հույսի կամուրջ»-ում, այլ նաև այլ հոգեբանական կառույցներում)։

Տնտեսագիտության ֆակուլտետի շրջանավարտներն առաջարկում են ապահովել մրցակցայի հավասար և օբյեկտիվ պայմաններ բոլոր ուսանողների համար, ավելացնել անգլերեն լեզվի դասաժամերը։

Ամփոփելով հարցման արդյունքները, նշենք, որ նման ուսումնասիրությունները նպատակ ունեն աջակցելու մասնաճյուղին՝ բարելավելու իր գործունեությունը, վերանայելու իր մոտեցումները կրթության և դրա իրականացման նկատմամբ, ներդնելու նոր կրթական ծրագրեր, նպաստելու իր ուսանողների որպես անհատ և որպես մասնագետ ձևավորմանը։ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղն իր ռազմավարությամբ և իր գործունեությամբ կարևորում է մասնաճյուղում ուսումնական գործընթացի անխափան և արդյունավետ կազմակերպումը, ուսումնառության գործընթացն ապահովում է անհրաժեշտ ռեսուրսներով և պարբերաբար բարելավում ու զարգացնում է դրանք, տրամադրում է բարձրորակ կրթություն՝ ներգրավելով Մայր բուհի և մասնաճյուղի լավագույն պրոֆեսորադասախոսական կազմին, ձգտում է բավարարել իր ներքին և արտաքին շահակիցների պահանջներն ու կարիքները, և ամենակարևորը, մասնաճյուղն իր գործունեությամբ և ձեռքբերումներով ձգտում է դառնալ առաջատար բարձրագույն ուսումնական հաստատություն ոչ միայն տարածաշրջանում, այլ նաև Հայաստանում։

Նշենք, որ ուսումնասիրության արդյունքները մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը տրամադրում է բոլոր շահագրգիռ կառույցներին, նրանց հետ միասին կազմում են վեր հանված խնդիրների լուծման ծրագրեր, և մասնաճյուղի ղեկավարության հետ միասին ռազմավարական պլանավորման շրջանակներում հնարավորինս լուծում են այդ խնդիրները։

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին